

## ԲԱՐԴԱԿՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՊԱՐԳԵՎԻ



Գևորգ Բարդակչյանը ծնվել է 1942 թ. Բեյրութում:

Իր հայագիտական բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պետական համալսարանում, այնուհետև դոկտորականը՝ Օքսֆորդի համալսարանում (Մեծ Բրիտանիա): 1974 թ. հրավիրվել է Հարվարդի համալսարան (ԱՄՆ) և որպես ավագ դասախոս ու մատենագետ՝ 1974–1987թթ. դասավանդել է հայագիտություն և ղեկավարել Հարվարդի

հայկական հավաքածուն:

1987-ին պրոֆեսոր Գ. Բարդակչյանը դառնում է Միչիգանի համալսարանի (ԱՄՆ) նոր հիմնադրված հայոց լեզվի և գրականության Մարի Մանուկյան ամբիոնի (Անն Արբոր) առաջին ստանձնողը: Նա միաժամանակ հիմնադրում ու ղեկավարում է Միչիգանի համալսարանի ամառային հայկական ինստիտուտը Երևանում (1988–2009): Ինստիտուտը գրավում է հարյուրավոր հայ և ոչ հայ ուսանողների ԱՄՆ-ից ու Կանադայից, ինչպես նաև Չեխիայից, Եգիպտոսից, Անգլիայից, Ֆրանսիայից, Հոլանդիայից, Թուրքիայից ու այլ երկրներից: Որպես Հայագիտական ծրագրի ղեկավար՝ նա կազմակերպում է միջազգային գիտաժողովներ, սիմպոզիումներ, աշխատարաններ և դասախոսություններ՝ նվիրված հայկական ավանդույթի տարբեր ասպեկտներին: Նա ամուր կապ և հարաբերություններ է հաստատում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Մատենադարանի, ԵՊՀ-ի, Հայաստանի ազգային գրադարանի և մի շարք ինստիտուտների հետ:

Գ. Բարդակչյանը եղել է Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության (Society for Armenian Studies) գործադիր խորհրդի անդամ, բազմակողմանիորեն մասնակցել նրա աշխատանքներին և երկուական հաջորդական տարով (1981, 1982), իսկ երրորդ անգամ՝ հինգ տարի (2010–2014) ժամկետով, եղել է ընկերակցության նախագահը: Նա եղել Հայաստանի և սփյուռքի հայագիտական պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ, ակտիվորեն դասախոսել է ԱՄՆ-ում, Եվրոպայում, Հայաստանում, Ռուսաստանում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Սինգապուրում և այլ երկրներում՝ հայ գրականությանը, պատմությանը և մշակույթին առնչվող տարաբնույթ թեմաներով: Դասախոսությունների լեզուն մեծամասամբ եղել է անգլերենը, սակայն առիթի դեպքում դասախոսություններ է կարդացել նաև հայերեն, արաբերեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն:

1984-ին նա Վաշինգտոնի Հոլոքոստի հիշատակման հանձնաժողովի հանձնարարությամբ կոնֆիդենցիալ ուսումնասիրություն է պատրաստել Հայոց ցեղասպանության մասին: Երկու տարի հետո նա նկարահանվել է Թեդ Պոլոսյանի Հանրային հեռարձակման (PBS) դոկումենտալ ֆիլմում՝ «Ճանապարհորդություն հայկական շավիղներով» «An Armenian Journey», որտեղ խոսում է Հայոց ցեղասպանության մասին:

Պրոֆ. Գ. Բարդակչյանը բազմաթիվ գրքերի և հոդվածների հեղինակ է: Բացի հայերենից և անգլերենից՝ նա իր ուսումնասիրությունների համար օգտագործում է արաբերեն, ադրբեջաներեն, հունարեն (koine), լատիներեն, պարսկերեն, ռուսերեն, օսմաներեն, ժամանակակից թուրքերեն և ասորերեն աղբյուրներ: Նրա կարևորագույն աշխատություններից են՝ «Հիտլերը և Հայոց ցեղասպանությունը» (*Hitler and the Armenian Genocide*), որը թարգմանվել է նաև հայերեն և թուրքերեն, արևելահայերենի ու արևմտահայերենի դասագրքերը, որոնք լայնորեն կիրառվում են ԱՄՆ-ի և այլ արտասահմանյան համալսարաններում, և նրա մոնումենտալ հատորը՝ «Հայ նոր գրականության ուղեցույց, 1500–1920. ներածական պատմությամբ» (*A Reference Guide to*

*Modern Armenian Literature, 1500 - 1920, with an introductory history*), որը միջազգայնորեն ճանաչվել որպես հայ նոր գրականության (1500–2000) ուսումնասիրման համար անփոխարինելի աղբյուր: Այս գիրքը՝ (Modern Ermeni Edebiyatı İnceleme), ինչպես նաև նրա մի շարք հոդվածներ 2013-ին Ստամբուլում թարգմանվել են թուրքերեն: Բոլորովին վերջերս՝ 2014 թ. պրոֆ. Բարդակյանը խմբագրեց (Ս. Լա Պորտայի հետ) «Հայ հայտնութենական ավանդությունը. համեմատական հեռանկարներ» (*The Armenian Apocalyptic Tradition: a comparative perspective*) (Brill, SVTP series, 2014) հիմնարար հատորը՝ նվիրված մինչ օրս ոչ բավարար ուսումնասիրված այդ թեմային: 2017թ. նրա՝ Օքսֆորդի համալսարանի դոկտորական աշխատանքը՝ «Հակոբ Պարոնյանի սոցիալական և քաղաքական սատիրան» (Hagop Baronian's Social and Political Satire), հրատարակվեց թուրքերեն (*Sivri Dilli Dahi: Hagop Baronian'ın Siyasi ve Toplumsal Hicvi*): ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտը 2017-ին նրա յոթ անգլերեն հոդվածները թարգմանեց հայերեն և հրատարակեց առանձին գրքով («Պատմաբանասիրական հոդվածներ»):

2005-ի դեկտեմբերին Երևանի պետական համալսարանը Գ. Բարդակյանին շնորհում է պատվավոր դոկտորի աստիճան (*honoris causa*): 2011-ին ընտրվում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: Նույն տարում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը նրան շնորհում է պատվավոր դոկտորի աստիճան: 2011-ին պարգևատրվում է Էլիս կղզու պատվո մեդալով՝ ամերիկյան մշակույթին բերած նպաստների համար:

2018 թ. հունվարին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հրավիրում է հատուկ նիստ՝ նշելու պրոֆ. Գ. Բարդակյանի 75-ամյակը:

kbar@umich.edu

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ  
(2014-2018 թթ.)

Bardakjian, K. 2014, “Kostandin Erznkac‘i’s Vision-Poem: Who bestow poetic grace and how,” *Mélanges Jean-Pierre Mahé*, édités par Aram Mardirossian, Agnès Ouzounian, Constantin Zuckerman, pp. 95-104. (Collège de France – CNRS, Centre de recherche d’histoire et civilisation de Byzance, Travaux et Mémoires,18), Paris, 2014.

Bardakjian, K. 2014, *The Armenian Apocalyptic Tradition: A Comparative Perspective: Essays presented in honor of Professor Robert W. Thomson on the occasion of his eightieth birthday*. Edited by Kevork B. Bardakjian and Sergio La Porta. Leiden: Boston: Brill [2014]. (Studia in Veteris Testamenti Pseudepigrapha, 25).

Bardakjian, K., « In Search of the Great King: The vilification and vindication of Arshak II, King of Armenia,” *Modern Greek Studies Yearbook*, University of Minnesota, Minneapolis, Minnesota, vol. 32/33, 2016/2017, 271-288.

Bardakjian, K., “Hagop Baronian’s Political and Social Satire,” doctoral thesis for Oxford University, translated and published in Turkish, *Sivri Dilli Dâhi: Hagop Baronian’ın Siyasi ve Toplumsal Hicvi*, Istanbul: bgst Yayınları, 2017.

Bardakjian, K., Բարդակյան, Գևորգ, Պատմաբանասիրական հոդվածներ: Երևան, ՀՀ ԳԱ Մ. Աբովյանի անվան գրականության ինստիտուտ, 2018: (“Historicophilological articles,” A translation into Armenian of seven of K. Bardakjian’s articles originally published in English)